

գրական տարբերութիւններ չունի:

Պորենացու ձեռագիրները համեմատաբար նոր են: Կէս ձեռագրի բացատրութեամբ՝ մնացածները ԺԶ. կամ ԺԷ. դարերից են: Սրանցից մէկը արտագրուած է մի ձեռագրից, որ գըրուած է եղել Ն. Լամբրոնացու համար, ուրեմն ԺԱ. դարի մի ձեռագրի ընդօրինակութիւն է. իսկ մի ուրիշ ձեռագիր երկու մաս ունի. կէսը հին գրութիւն, կէսը նոր:

Մ. Արեղեան ենթադրում է, որ այդ խաւն ձեռագրի հին մասը ԺԳ-ԺԴ դարից պէտք է համարել, քանի որ նորոգուած է 1567 թ.: Մեր Գողթան երգերը այդ ձեռագրի ՀԻՆ մասի մէջ են (համեմատիր, Պորենացի, յառաջարան ԺԹ-երորդ էջի համեմատական ցանկը): Արդ՝ քանի որ «արքայն» բառի վերաբերմամբ տարբերակներ չկան ձեռագիրներին մէջ՝ պէտք է ընդունել, որ «հեծաւ արի արքայն» է գրուած եղել նաեւ այն ձեռագիրներին մէջ, որոնցից արտագրուած են մեր ունեցած հնագոյն բնագիրները:

Միւս կողմից «արքայն» չի կարող համարուել լուսանցքի մէջ նշանակուած մեկնութիւն: Հազիւ թէ գտնուէր մի ընթերցող, որ կարդալով մի ամբողջ գլուխ Արտաշէս թագաւորի մասին, չիմանար, թէ խօսքը քաղաւորի մասին է. եւ չմոռանալու համար լուսանցքի մէջ նշանակէր՝ «արքայն», այսինքն՝ յիշի՛ր, Արտաշէս ասածը թագաւորն է: Կամ՝ ցանկանալով յետնորդներին շիոթումից զերծ պահել՝ լուսանցքում գրէր «արքայն», իբր թէ՛ «լա՛ւ իմացէ՛ք հա՛, խօսքը Արտաշէս արքայի մասին է... Եւ վերջապէս եթէ այդ տողի նախաւոր ձեւը լինէր «հեծաւ արի Արտաշէս», այն ժամանակ լեզուի օրէնքով պէտք է լինէր «հեծաւ արիմ Արտաշէս»: Իսկ երբ լուսանցքի «արքայն» մտնէր բնագրի մէջ՝ այն ժամանակ մենք կ'ունենայինք «հեծաւ արիմ արքայն Արտաշէս»:

Ձեռագիրներից ոչ մէկն այսպիսի ընթերցում չի տալիս մեզ: Նրանցից մէկի գրիչը աչքից փախցրել է «արի» բառը, սակայն յետոյ դրել է տողի գլխին «արի», բայց ոչ «արիմ»: (Տե՛ս, Պորեն. 1913, էջ 179, ծանօթ.):

Կարծում եմ, պարզ է, որ «արքայն» բառը բնագրի անբաժան մասն է եւ ոչ եկամուտ մի տարր:

* * *

Աւելի վատ ձեւով աղճատուած է Արտաշէսի անէծքն իր որդուն:

Տողերի համաչափութիւն ստեղծելու համար՝ Լ. Գրէյ՝ հին երգի բնագիրը, որ ասում է.

Եթէ դու յորս հեծցիս
Յազատ ի վեր ի Մասիս
Զքեզ կայցին քաջք տարցին
Յազատ ի վեր ի Մասիս
Անդ կացցես եւ զլոյս մի տեսցես:
Առաջարկում է կարգալ.
Եթէ դու յորս հեծըցիս
Յազատ ի վեր ի Մասիս
Զքքեզ կայլցին քաջք
Յազատ ի վեր ի Մասիս
Եւ ըզլոյս մի տեսըցես.

Այսքան արտաոտոց հետեւանքների կը հասնի ամէն մարդ, ով որեւէ խնդիր քննութեան կ'առնի միմիայն մի տեսակէտից: Լ. Գրէյին հետաքրքրում է միմիայն տաղաչափութիւնը, որ ենթադրում է թէ պէտք է անպայման համաչափ լինի. ուստի համարձակօրէն թրատում է այս ու այն մասը, իր ենթադրած եօթ վանկերն ստանալու համար: Բայց թէ դրանից ի՞նչ անհեթեթ բաներ են դուրս գալիս՝ նրա փոյթը չէ...

Արտաշէսն ասում է.

Երբ դու ձի հեծնես որսի դնալու դէպի Ազատ Մասիսն ի վեր, քեզ պիտի բռնեն քաջերը, տանեն Ազատ Մասիսն ի վեր, այնտեղ պիտի մնաս ու լոյս չտեսնես»:

«յԱզատն ի վեր ի Մասիս» թւում է լեզուական մի բանաձեւ, որ Պորենացին գործ է ածում նաեւ իր կողմից՝ գուցէ յափշտակուած բանաձեւի գեղեցիկութեամբ: Սահակ Բագրատունուն նա գրում է (Ա. 1 (լա)). չե՞ս գարմանում թէ «ո՞րպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յԱզատն ի վեր ի Մասիս»:

Այս բանաձեւն առաջին անգամ նշանակում է «երբ գնաս դէպի Մասիս, երկրորդ անգամ նշանակում է «քեզ կը տանեն վեր՝ Մասիս»: Եւ դա կապ ունի այն գրոյցների հետ, որ պատմում էին Արտաւազդի մասին եւ որոնցով Պորենացին աւելի իրական եւ բանաւոր է դարձրել, կամ իր խօսքով՝ «ճշմարտում է» հին առասպելը: Նա ասում է՝ Արտաւազդն, «անցեալ